ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenis.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 սեպտեմբերի 2024 թվականի N 0782-Ա

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարդենիսի համայնքապետարանի և <<Միքայել Երանոսյան Ոսկանի>> Ա/Ձ և <<ՀՈՎԱՐՍ ՇԻՆ>> ՍՊԸ կոնսորցիումի միջև 08.08.2024թվականին կնքված «**ՀՀԳՄՎՀ-ԳՀԾՁԲ-24/32-1**», «**ՀՀԳՄՎՀ-ԳՀԾՁԲ-24/32-3**», «**ՀՀԳՄՎՀ-ԳՀԾՁԲ-24/32-4**» ծածկագրերով ծառայությունների մատուցման գնման պայմանագրերի (այսուհետ՝ Պայմանագրեր) 1.2 կետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին համապատասխան, ինչպես նաև պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի սահմանված ժամկետներով:

Ընկերությունը խախտելով պայմանագրերով սահմանված պարտավորությունները, չի իրականացրել Պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրով պահանջված բոլոր չափաբաժիններով նշված ծառայությունները, որոնց կատարման ժամկետներ էր սահմանված սույն թվականի սեպտեմբերի 2-ը ներառյալ:

Պայմանագրերի 2.1.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

Վարդենիսի համայնքապետարանը, ղեկավարվելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ, ինչպես նաև Պայմանագրերի 2.1.3 կետի բ) ենթակետի պահանջով՝ բոլոր չափաբաժինների մասով միակողմանի /ամբողջությամբ/ լուծում է 08.08.2024 թվականին կնքված «**ՀՀԳՄՎՀ-ԳՀԾՁԲ-24/32-1**», «**ՀՀԳՄՎՀ-ԳՀԾՁԲ-24/32-3**», «**ՀՀԳՄՎՀ-ԳՀԾՁԲ-24/32-4**» ծածկագրերով ծառայությունների մատուցման գնման պայմանագրերը:

08.08.2024 թվականին կնքված «**ՀՀԳՄՎՀ-ԳՀԾՁԲ-24/32-1**», «**ՀՀԳՄՎՀ-ԳՀԾՁԲ-24/32-3**», «**ՀՀԳՄՎՀ-ԳՀԾՁԲ-24/32-4**» ծածկագրերով պայմանագրերը միակողմանի /ամբողջությամբ/ լուծման վերաբերյալ ծանուցումը հրապարակվել է տեղեկագրում սույն թվականի սեպտեմբերի 24-ին և Պայմանագրերը սեպտեմբերի 25-ի դրությամբ համարվում են լուծված:

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետով և նույն հոդվածի 2-րդ մասով.

ՈՐՈՇԵՑԻ

1. <<Միքայել Երանոսյան Ոսկանի>> Ա/Ձ -ին (ՀՎՀՀ՝ 74379849, Հասցե՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Սպանդարյան փ., տուն 20, Էլ.փոստ eranosyanmiqo@gmail.com) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:
2. «ՀՈՎԱՐՍ ՇԻՆ» ՍՊԸ -ին (ՀՎՀՀ՝ 00128149, Հասցե՝ ՀՀ ք.Երևան, Կոմիտաս 38, Էլ.փոստ hamleta@bk.ru) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:
3. Սույն որոշման օրինակն ուղարկել Մասնակցին և ՀՀ ֆինանսների նախարարություն:
4. Որոշումը կարող է բողոքարկվել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ այն ծանուցվելու օրվանից երեսուն օրվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2024թ. սեպտեմբերի 24
ք. Վարդենիս